ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» դեկտեմբերի 2011թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի թիվ 300 որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

«ՀԱՅԱՍՏԱՆ» Մարզական Միություն հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող Ագաթանգեղոսի 6 հասցեում գտնվող շինության նկատմամբ սահմանել գույքահարկի արտոնություն՝ մինչև 2008 թվականը գոյացած տույժերի նկատմամբ՝ 2.625.252 (երկու միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր հիսուներկու) դրամի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» Մարզական Միություն հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող Ագաթանգեղոսի 6 հասցեում գտնվող շինության գույքահարկի գծով հարկային պարտավորությունները /մինչև 2008թ-ը գոյացած տույժերը/ կազմում են 2.625.252 (երկու միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր հիսուներկու) դրամ, որի համար «ՀԱՅԱՍՏԱՆ» Մարզական Միություն հասարակական կազմակերպությունը 05.12.2011թ. հ.95 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին, գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

«ՀԱՅԱՍՏԱՆ» Մարզական Միությունը շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որի կանոնադրական գործունեությունն ամբողջությամբ նպատակաուղղված է մանկապատանեկան սպորտի զարգացմանը: Այդ նպատակով պետբյուջեից մարզական միությանը հատկացվում է ֆինանսական աջակցություն՝ միայն մանկապատանեկան մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների, սպասարկող անձնակազմի աշխատավարձի վճարման և դպրոցների բազային մարզակառույցների շահագործման կոմունալ ծախսերը հոգալու համար: Որպես հետևանք՝ ֆինանսավորման և այլ մուտքերի սակավության պատճառով սահմանված գույքահարկի վճարումները ամբողջությամբ և ժամանակին չկատարելու հետևանքով գոյացել են տույժեր:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ «ՀԱՅԱՍՏԱՆ» Մարզական Միությունը պետբյուջեից ֆինանսավորվող շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, և գտնվում է ֆինանսապես ծանր վիճակում, առաջարկվում է «ՀԱՅԱՍՏԱՆ» Մարզական Միություն հասարակական կազմակերպությանը սահմանել 2.625.252 (երկու միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր հիսուներկու) դրամի չափով գույքահարկի արտոնություն՝ մինչև 2008թ-ը գոյացած տույժերի մասով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀԱՅԱՍՏԱՆ» Մարզական Միություն հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող Ագաթանգեղոսի 6 հասցեում գտնվող շինության գույքահարկի գծով՝ մինչև 2008թ-ը գոյացած տույժերը կազմում են 2.625.252 (երկու միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր հիսուներկու) դրամ, որի համար «ՀԱՅԱՍՏԱՆ» Մարզական Միություն հասարակական կազմակերպությունը 05.12.2011թ. հ.95 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին, գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ «ՀԱՅԱՍՏԱՆ» Մարզական Միությունը պետբյուջեից ֆինանսավորվող շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է և գտնվում է ֆինանսապես ծանր վիճակում, նպատակահարմար եմ գտնում «ՀԱՅԱՍՏԱՆ» Մարզական Միություն հասարակական կազմակերպությանը սահմանել 2.625.252 (երկու միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր հիսուներկու) դրամի չափով գույքահարկի արտոնություն՝ մինչև 2008 թվականը գոյացած տույժերի մասով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 1

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» որոշման նախագծի առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում և/կամ/ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 2

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**